ք.Երևան

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇՈՏ ՖԱՐՍՅԱՆԻՑ

ԻՐԱԶԵԿՈՒՄ
Հանրային հավաքի անցմացման մասին

Հարգելի՛ պարոն Ավինյան,

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ անցկացնելու եմ հանրային հավաք՝ հանդես գալով որպես կազմակերպիչ:

Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով իրազեկմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը

1. Հավաքի վայրը՝ Երևան, Ազատության հրապարակ:

2. Հավաքի սկզբի և ավարտի ժամանակը՝ 2025թ. հոկտեմբերի 16-ին ժամը 18:30-24:00

3. Հավաքի նպատակը՝ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելության և կարևորության ընդգծումը, հայ ժողովրդի հոգևոր կյանքում Մայր Աթոռի բացառիկ դերի կարևորումը և մի շարք հանրային ճանաչում ունեցող անձանց անձնական ազատության իրավունքի գերակայության ընդգծումը:

4. Մասնակիցների սպասվող թիվը՝ շուրջ 10,000 անձ:

5. Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները՝ Հավաքների ազատության սահմանադրական իրավունքի իրացման ամենաարդյունավետ և նույնիսկ հենց Սահմանադրությամբ հիշատակված բացօթյա տարածքում տվյալ դեպքում իրազեկման ենթակա հավաքը իրացվելու է նաև անհրաժեշտ սարքավորումների ապահովմամբ՝ օրվա խորհրդին համապատասխան և դրանով հավաքի կազմակերպվածության երաշխավորմամբ: Մասնավորապես հնարավոր է տեղադրվի բեմահարթակ, կոնստրուկցիաներ, ձայնային սարքավորումներ (35 կվտ), լուսային սարքավորումներ, Լեդ էկրան, հոսանքի հզորություն (30 կվտ/ժ): Հնարավոր է տեղի ունենան ելույթներ, ինչի հանրային խոսք:

6. Կարգադրիչների նախատեսվող թիվը՝ 10 մարդ:

7. Հավաքի ընթացքում նախատեսվում է երթ մինչև 24:00, ժամի հստակեցումը Ոստիկանության ծառայողների հետ հստակեցմամբ՝ Ազատության հրապարակից Մաշտոցի պողոտա - Ամիրյան փողոց – Վազգեն Սարգսյան փողոց – Խորենացի փողոց – Վազգեն Սարգսյան փողոց - Նալբանդյան փողոցով մինչև ԱԱԾ շենքի մոտ:

8. Հավաքի կազմակերպչի տվյալները՝ ազգանուն, անուն, հայրանուն՝ Աշոտ Լևոնի Ֆարսյան

9. Հավաքի ղեկավարի տվյալները՝ Ազգանուն, անուն, հայրանուն՝ Աշոտ Լևոնի Ֆարսյան

«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հավաքի իրազեկման մեջ նշված ժամանակում և վայրում այլ, ներառյալ՝ հակադարձ ուղղվածությամբ հավաքի անցկացումն ինքնին հիմք չէ հավաքի նկատմամբ սահմանափակումներ սահմանելու համար, եթե չկա դրանց մասնակիցների բախման անմիջական վտանգ: Տվյալ դեպքում ըստ ունեցած նախնական տվյալների այդ օրը նախատեսված չէ որևէ այլ անձի կողմից համապատասխան վայրում հանրային հավաք:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13-րդ և -14-րդ հոդվածներով՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

Սույն իրազեկումը ընդունել ի գիտություն:

Կից ներկայացվում է անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

ՀԱՎԱՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ
ԱՇՈՏ ՖԱՐՍՅԱՆ

01.10.2025թ.